Արձանագրություն N 2

Արագածոտնի մարզի «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ կահույքի պատրաստման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2023/9» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «Նոյեմբերի» 2023թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ե. Էլիբեկյան
Հանձնաժողովի անդամներ	Վ.Վահանյան,Ա.Գևորգյան,Հ.Խուրշուդյան, Ա. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ե. Էլիբեկյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.10.23թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը 14:00-ին: 2023 թվականի հոկտեմբերի 12-ին ժամը 14:30-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Ստրոյիննովացիի» ՍՊԸ	matevosyan.23@list.ru	04243812

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ե. Էլիբեկյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան: «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էր հրավերով պահանջվող կահույքի պատրաստման աշխատանքների ընթացքում իր կողմից պատրաստվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ որը պետք է ներկայացվեր Աղյուսակ 1-ով: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը 23.10.2023թ.որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատումը և գնահատող հանձնաժողովը armeps համակարգով ծանուցել է «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ին հրավերում նշված՝ hsargsyan@moh.am էլեկտրոնային

հասցեին մինչև 24.10.2023թ. ժամը 18:00-ն ներկայացնել շտկված պահանջվող Աղյուսակ 1-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ե. Էլիբեկյան)

23.10.2023թ. հայտերի գնահատումը կասեցվել էր՝ «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը թերի, ոչ ճիշտ ներկայացնելու և վերջինս շտկելու նպատակով:

24.10.2023թ. դրությամբ՝ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին ծանուցված մասնակիցը ներկայացրել էր պահանջվող շտկված փաստաթուղթը՝ Աղյուսակ 1-ը՝ կահույքի պատրաստման ժամանակ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը: Գնահատելով վերջինս գնահատող հանձնաժողովը շտկումներ ներկայացրած մասնակից՝ «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ի հայտը գնահատեց բավարար:

Որոշվեց. Շտկումներ ներկայացրած մասնակից՝ «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և ճանաչել հաղթող մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Ե. Էլիբեկյան)

12.10.2023թ.՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված գները ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ե. Էլիբեկյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ե. Էլիբեկյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2023/9» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր «Ստրոյիննովացիի» ՍՊԸ-ի հետ, ընդ որում պայմանագրային գումարը կկազմի 28,411,000 ՀՀ դրամ (իսկ գնային առաջարկը ներկայացվել է հրավերով սահմանված ձևով՝ 896,000 ՀՀ դրամ՝ կահույքի առանձին ապրանքների միավորի գների հանրագումարով):

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԳՀԱՇՁԲ-2023/9» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել ՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ե. Էլիբեկյան

Անդամներ՝ _____ Վ. Վահանյան

---------- Ա. Գևորգյան

_____ Հ. Խուրշուդյան

_____ Ա. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Արագածոտնի մարզի «Թալինի ԲԿ» ՓԲԸ հագեցման համար անհրաժեշտ կահույքի պատրաստման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին ներկայացրած գնային առաջարկները 12.10.2023թ.-ին հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

NN	Ծառայության անվանումը	Գնման գին	«Ստրոյիննովացիի» ՍՊԸ		
			Արժեք	ԱԱՀ	Գումար
1	Կահույքի պատրաստման աշխատանքներ	1,384,000.00	746,667	149,333	896,000